

«Կասկադ Ինվեստմենտս» ՓԲԸ

**Ֆինասական հաշվետվություններ
2007թ. դեկտեմբերի 31-ին
ավարտված տարվա համար**

Բովանդակություն

Ղեկավարության ամփոփում.....	2
Անկախ աուդիտորական եզրակացություն.....	3
Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն.....	5
Հաշվապահական հաշվեկշիռ.....	6
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն.....	7
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն.....	8
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ.....	9
1 Նախապատմություն	9
2 Պատրաստման հիմունքները	9
3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն	10
4 Եկամուտ հավատարմագրային կառավարումից և այլ ծառայություններից	21
5 Այ գործառնական եկամուտ	21
6 Վնաս փոխարժեքային տարբերություններից	21
7 Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախս	21
8 Ընդհանուր վարչական ծախսեր	22
9 Այլ գործառնական ծախսեր	22
10 Շահութահարկի գծով ծախս	23
11 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	23
12 Վաճառքի համար մատչելի ակտիվներ	24
13 Հիմնական միջոցներ	25
14 Առևտրական դեբիտորական պարտքեր	26
15 Այլ դեբիտորական պարտքեր	26
16 Այլ կրեդիտորական պարտքեր	26
17 Հետաձգված հարկային ակտիվ	27
18 Բաժնետիրական կապիտալ	27
19 Ռիսկերի կառավարում	28
20 Կապիտալի կառավարում	31
21 Պայմանական դեպքեր	31
22 Հավատարմագրային կառավարման և բրոքերային գործունեություն	32
23 Գործարքներ կապակցված կողմերի հետ	33
24 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	35
25 Ֆինանսական գործիքների իրական արժեք	35
26 Միջին արդյունավետ տոկոսադրույքներ	35
27 Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության վերլուծություն ըստ հաշվեկշռի հոդվածների	36
28 Ակտիվները և պարտավորությունները ըստ արժույթների	37
29 Հաշվետու ամսաթվից հետո տեղի ունեցած դեպքեր	37

Թարգմանության ծանուցում

Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն պատրաստված 2007թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունները և աուդիտորական եզրակացությունը կազմվել են անգլերեն լեզվով: Այդ փաստաթղթերին կից ներկայացվող թարգմանությունը պատրաստվել է օգտագործողների հարմարության համար: Հայերեն և անգլերեն տարբերակների անհամապատասխանության դեպքում միանշանակորեն գերակայում է անգլերեն տարբերակը:

10 ապրիլի 2008թ.

Ղեկավարության ամփոփում

Հաշվետու 2007թ. ընթացքում «Կասկադ Ինվեստմենտս» ՓԲԸ-ն տեղաբաշխել է 1,250 միլիոն դրամ ծավալի կորպորատիվ պարտատոմսեր, ինչը կազմում են տեղական շուկայի ամբողջ տեղաբաշխված պարտատոմսերի 45.9%-ը և իրականացրել է 613,826 միլիոն դրամի առևտուր բորսայական երկրորդային շուկայում, ինչը գերազանցում է ընդհանուր շուկայի 87.3%-ը: Մենք շարունակում ենք մնալ շուկայի առաջատարը ակտիվների (հավատարմագրային) կառավարման և արժեթղթերի բրոքերային առևտրի ոլորտներում: Անցած տարի Ընկերությունը ստացավ արժեթղթերի Պահառուի լիցենզիա և սկսեց հրապարակել հետազոտություններ տեղական արժեթղթերի վերաբերյալ:

Չնայած գործառնական եկամտի 2.43 անգամ աճին, մենք շարունակում ենք ծախսել ավելի քան վաստակում ենք: Ընկերությունը պլանավորում է ևս մեկ տարի օգտագործել բաժնետիրոջ կապիտալ ներդրումները՝ որպես հիմնական ֆինանսավորման աղբյուր: ՀՀ կապիտալի շուկայի զարգացման բավականին գրավիչ հեռանկարը շարունակում է մնալ այն հիմքը, որի վրա կառուցված են մեր լավատեսական կանխատեսումները:

«Կասկադ Ինվեստմենտս» ՓԲԸ-ն ստեղծել է հուսալի գործառնական ենթակառուցվածք և հավաքագրել է բարձրորակ անձնակազմ: Ընկերությունը հաջո դիրք է զբաղեցնում՝ Հայաստանի արժեթղթերի և դրանց հետ առնչվող շուկաներում տեղի ունեցող օրենսդրական բարեփոխումներից և ընդհանուր առաջընթացից օգտվելու տեսանկյունից:

Հարգանքով՝

Հայկ Պարսյան
Գլխավոր տնօրեն





KPMG Armenia cjsc
8 Hanrapetutian Street
Yerevan 0010
Republic of Armenia

Քեյ-Փի-Էն-Ջի Արմենիա ՓԲԸ
Հանրապետության 8
Երևան 0010
Հայաստանի Հանրապետություն

Telephone Հեռախոս + 374 (10) 566 762
Fax Ֆաքս + 374 (10) 566 762
Internet Ինտերնետ www.kpmg.am

Անկախ աուդիտորական եզրակացություն

«Կասկադ Ինվեստմենտս» ՓԲԸ-ի
Տնօրենների խորհրդին

Ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ եզրակացություն

Մենք աուդիտի ենք ենթարկել «Կասկադ Ինվեստմենտս» ՓԲԸ-ի (այսուհետ՝ «Ընկերություն») կից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվեկշիռը՝ առ 31-ը դեկտեմբերի 2007թ., հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և այլ բացատրական ծանոթագրությունները:

Ֆինանսական հաշվետվությունների համար ղեկավարության պատասխանատվությունը

Սույն ֆինանսական հաշվետվությունների կազմման և Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն ճշմարիտ կերպով ներկայացման համար պատասխանատու է ղեկավարությունը: Այս պատասխանատվությունը ներառում է այնպիսի ներքին վերահսկողության համակարգի մշակումը, կիրառումը և վարումը, որը թույլ կտա պատրաստել և ճշմարիտ կերպով ներկայացնել ֆինանսական հաշվետվություններ, որոնք գերծ են էական խեղաթյուրումներից՝ պայմանավորված խարդախությամբ կամ սխալով: Դեկավարությունը պատասխանատու է նաև համապատասխան հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ստեղծված հանգամանքներում ողջամիտ հաշվապահական գնահատականներ տալու համար:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է անցկացված աուդիտի արդյունքում արտահայտել կարծիք ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Մենք աուդիտն անցկացրեցինք Աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք աուդիտը պլանավորենք և իրականացնենք՝ ֆինանսական հաշվետվությունները էական խեղաթյուրումներից գերծ լինելու մասին ողջամիտ երաշխիք ձեռք բերելու նպատակով:

Աուդիտորական աշխատանքները ներառում են այնպիսի ընթացակարգերի իրականացում, որոնք թույլ են տալիս ձեռք բերել աուդիտորական ապացույցներ ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների և բացահայտումների վերաբերյալ: Ընտրված ընթացակարգերը կախված են աուդիտորի որոշումից և ներառում են նաև այնպիսի էական խեղաթյուրումների ռիսկի գնահատումը, որոնք կարող են պայմանավորված լինել թե խարդախությամբ և թե սխալներով: Այս ռիսկը գնահատելիս աուդիտորը դիտարկում է ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և վերջիններիս ճշմարիտ կերպով ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողության համակարգը, նպատակ ունենալով մշակել ստեղծված հանգամանքներին համապատասխանող աուդիտորական ընթացակարգեր՝ բայց ոչ կարծիք արտահայտել կազմակերպության ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության համապատասխանության, ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

Մենք գտնում ենք, որ ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

«Քեյ-Փի-Էն-Ջի Արմենիա», փակ բաժնետիրական ընկերություն,
Շվեյցարիայի օրենսդրության համաձայն գրանցված «Քեյ-Փի-Էն-Ջի Ինթերնեյշնլ»-ի անդամ հանդիսացող անկախ ընկերությունների
«Քեյ-Փի-Էն-Ջի»-ի ցանցի անդամ:

Եզրակացություն

Մեր կարծիքով, ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով, ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը առ 31-ը դեկտեմբերի 2007թ., ինչպես նաև նրա գործունեության արդյունքներն ու դրամական միջոցների հոսքերը այդ ամսաթվին ավարտված տարվա համար՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն:

Հանգամանքների լուսարանում

Առանց վերապահումով դրական կարծիք արտահայտելու՝ ցանկանում ենք Ձեր ուշադրությունը հրավիրել Ծանոթագրություն 2-ին, որտեղ նշված է, որ 2007թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարում Ընկերությունը կրել է 61,217 հազար դրամ գումարով զուտ վնաս և այդ ամսաթվի դրությամբ Ընկերության կուտակված վնասը կազմել է 61,217 հազար դրամ: Այս փաստերը վկայում էական անորոշության մասին, որը կարող է լուրջ կասկածների տեղիք տալ գործունեությունն անընդհատության սկզբունքով շարունակելու Ընկերության կարողության վերաբերյալ:



Լենդրյու Գոբաշել
Տնօրեն

KPMG Armenia



Տիգրան Գասարյան
Ավագ մենեջեր, Աուդիտի բաժին

«Բեյ-Փի-Էմ-Ձի Արմենիա» ՓԲԸ
10 ապրիլի 2008թ.

*«Կասկադ Ինվեստմենտս» ՓԲԸ
Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն
2007թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար*

	Ծնթգ.	2007թ. հազ. դրամ	2006թ. հազ. դրամ
Եկամուտ հավատարմագրային կառավարումից և այլ ծառայություններից	4	19,968	8,460
Այլ գործառնական եկամուտ	5	2,671	601
Վնաս փոխարժեքային տարբերություններից	6	(920)	(119)
Գործառնական եկամուտ		21,719	8,942
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախս	7	(397)	(468)
Ընդհանուր վարչական ծախսեր	8	(82,181)	(75,553)
Այլ գործառնական ծախսեր	9	(358)	(278)
Գործառնական ծախսեր		(82,936)	(76,299)
Վնաս մինչև հարկումը		(61,217)	(67,357)
Շահութահարկի գծով ծախս	10	-	(8,324)
Զուտ վնաս		(61,217)	(75,681)

5-ից 37-րդ էջերում ներկայացված ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են Տնօրենների խորհրդի կողմից 2008թ. ապրիլի 10-ին:

Հայկ Պապյան
Գլխավոր տնօրեն



Ռուզմնա Գավալյան
Գլխավոր հաշվապահ

Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ճանոթագրությունների հետ մեկտեղ:

Անգլերեն լեզվով պատրաստված փաստաթղթի թարգմանություն: Տես՝ թարգմանության ծանուցում, էջ 2:

	Ծնթգ.	2007թ. հազ. դրամ	2006թ. հազ. դրամ
ԱԿՏԻՎՆԵՐ			
Դրամական միջոցներ և բանկային հաշիվների մնացորդներ	11	6,317	36,049
Վաճառքի համար մատչելի ակտիվներ	12	60,685	5,932
Հիմնական միջոցներ	13	4,926	3,456
Առևտրական դեբիտորական պարտքեր	14	2,893	2,450
Այլ դեբիտորական պարտքեր	15	835	964
Ընդամենը ակտիվներ		75,656	48,851
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ			
Այլ կրեդիտորական պարտքեր	16	6,790	9,475
Ընդամենը պարտավորություններ		6,790	9,475
Սեփական կապիտալ			
Բաժնետիրական կապիտալ	18	130,083	149,881
Կուտակված վնաս		(61,217)	(110,505)
Ընդամենը սեփական կապիտալ		68,866	39,376
Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ		75,656	48,851

Հաշվապահական հաշվեկշիռը պետք է դիտարկվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ճանոթագրությունների հետ մեկտեղ:

Անգլերեն լեզվով պատրաստված փաստաթղթի թարգմանություն: Տես՝ թարգմանության ծանուցում, էջ 2:

	Ծնթգ.	2006թ. հազ. դրամ	2007թ. հազ. դրամ
ԴՐԱՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ			
Հավատարմագրային կառավարումից և այլ ծառայություններից ստացված գումարներ		21,896	7,477
Վճարված գուտ կոմիսիոն և այլ վճարներ		(397)	(468)
Վճարված ընդհանուր վարչական ծախսեր		(81,020)	(74,558)
Գործառնական ակտիվների (աճ)/նվազում			
Վաճառքի համար մատչելի ակտիվներ		(54,753)	78
Այլ դեբիտորական պարտքեր		129	(458)
Գործառնական պարտավորություններ աճ/(նվազում)			
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր		(2,385)	1,360
Դրամական միջոցների գուտ հոսքեր գործառնական գործունեությունից		(116,530)	(66,569)
ԴՐԱՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐ ՆԵՐԴՐՈՒՄՅԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ			
Հիմնական միջոցների գուտ ձեռք բերում		(3,215)	(4,663)
Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից		(3,215)	(4,663)
ԴՐԱՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ			
Հոսքեր բաժնետիրական կապիտալի թողարկումից		90,707	102,436
Դրամական միջոցների հոսքեր ֆինանսական գործունեությունից		90,707	102,436
Դրամական միջոցների և դրանց համարժեքների գուտ աճ		(29,038)	31,204
Փոխանակման փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		(694)	(112)
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեակզրի դրությամբ		36,049	4,957
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեվերջի դրությամբ	24	6,317	36,049

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող Ծանոթագրությունների հետ մեկտեղ:

*«Կասկադ Ինվեստմենտս» ՓԲԸ
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն
2007թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար*

	Բաժնետիրական կապիտալ	Կուտակված վնաս	Ընդամենը
	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ
Մնացորդը առ 1 հունվարի 2006թ.	47,445	(34,824)	12,621
Թողարկված բաժնետոմսեր	102,436	-	102,436
Տարվա գուտ վնաս	-	(75,681)	(75,681)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2006թ.	149,881	(110,505)	39,376
Մնացորդը առ 1 հունվարի 2007թ.	149,881	(110,505)	39,376
Բաժնետոմսերի անվանական արժեքի փոփոխություն	(110,505)	110,505	-
Թողարկված բաժնետոմսեր	90,707	-	90,707
Տարվա գուտ վնաս	-	(61,217)	(61,217)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2007թ.	130,083	(61,217)	68,866

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող Շանոթագրությունների հետ մեկտեղ:

1 Նախապատմություն

Հիմնական գործունեությունը

«Կասկադ Ինվեստմենտս» ՓԲԸ-ն («Ընկերություն») հիմնադրվել է Հայաստանի Հանրապետությունում որպես փակ բաժնետիրական ընկերություն 2004թ. ապրիլի 8-ին և հավատարմագրային կառավարման ու բրոքերային-դիլերային գործունեության լիցենզիաներ է ստացել 2004թ. դեկտեմբերի 28-ին: Ընկերության իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան, Մ. Խորենացու փող. 13:

Ընկերության հիմնական գործունեությունը հավատարմագրային կառավարումն է և արժեթղթերով գործառնությունների իրականացումն է:

Ընկերության գործունեությունը կարգավորվում է ՀՀ Կենտրոնական բանկի («ՀՀ ԿԲ»), ՀՀ Կենտրոնական դեպոզիտարիա ԻԿԿ-ի և ՀՀ Ֆոնդային բորսա ԻԿԿ-ի կողմից: Ընկերության ակտիվների և պարտավորությունների մեծամասնությունը տեղակայված է Հայաստանի Հանրապետությունում: Տարվա վերջում Ընկերության աշխատակիցների թիվը կազմում էր 14 (2006թ-ին՝ 6):

Բաժնետերեր

Ընկերության բաժնետիրական կապիտալի 99.9998% պատկանում է «Գ.ա.Ֆեւճեան Ընտանեկան Հիմնադրամին» («Բաժնետեր») և ֆինանսավորման մեծ մասն Ընկերությունը ստանում է Բաժնետիրոջից: Արդյունքում Ընկերությունը տնտեսապես կախման մեջ է Բաժնետիրոջից: Կապակցված կողմերի հետ գործարքների մանրամասները ներկայացված են Ծանոթագրություն 23-ում:

Հայաստանի գործարար միջավայրը

Հայաստանում տեղի են ունեցել քաղաքական և տնտեսական փոփոխություններ, որոնք ազդեցություն են ունեցել և կշարունակեն ազդեցություն ունենալ այս միջավայրում գործող ձեռնարկությունների գործունեության վրա: Հետևաբար, Հայաստանի գործարար միջավայրում ծավալած գործունեությունը կապված է ռիսկերի հետ, որոնք բնորոշ չեն այլ շուկաներին: Ներկայացվող ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են ղեկավարության գնահատականը Ընկերության ֆինանսական վիճակի և գործառնությունների վրա Հայաստանի տնտեսական իրավիճակի հնարավոր ազդեցության վերաբերյալ: Ապագա տնտեսական իրավիճակը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

2 Պատրաստման հիմունքները

Համապատասխանության մասին հայտարարություն

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների («ՖՀՄՍ») պահանջների համաձայն:

Չափման հիմունքները

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով, բացառությամբ իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում և իրական արժեքով ներկայացված վաճառքի համար մատչելի ակտիվների:

Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը ՀՀ դրամն է («դրամ»): Դեկլարարության կողմից Ընկերության համար ֆունկցիոնալ արժույթ է սահմանվել դրամը, քանի որ վերջինս արտացոլում է Ընկերության գործունեության հիմքում ընկած իրադարձությունների և հանգամանքների տնտեսական էությունը: Դրամը հանդիսանում է նաև սույն ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը:

Ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ:

Անընդհատություն

ՖՀՄՍ համաձայն կազմված սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են անընդհատության սկզբունքից ելնելով, որն ենթադրում է ակտիվների իրացում և պարտավորությունների մարում բնականոն գործունեության ընթացքում:

2007թ. ընթացքում Ընկերությունը կրել է 61,217 հազար դրամ գումարով վնաս և 2007թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կուտակված վնասը կազմել է 61,217 հազար դրամ: Այս վնասները կասկածներ են հարուցում գործունեությունն անընդհատության սկզբունքով իրականացնելու Ընկերության կարողության վերաբերյալ: Դեկլարարությունն ակնկալում է, որ 2009թ-ից Ընկերության ղեկավարությունը կդառնա շահութաբեր և իրագործում է ծրագրեր համապատասխան ֆինանսավորում ապահովելու համար, ինչը թույլ կտա Ընկերությանը շարունակել իր գործունեությունը: Ի լրումն, Բաժնետերն իր մտադրությունն է հայտնել անհրաժեշտության դեպքում Ընկերությանը ցուցաբերել պահանջվող ֆինանսական աջակցություն գործունեությունը իրականացնելու համար:

Գնահատումների և դատողությունների օգտագործում

Այս ֆինասական հաշվետվությունները ՖՀՄՍ-ի պահանջների համաձայն պատրաստելու համար ղեկավարությունը կատարել է ակտիվների և պարտավորությունների ներկայացմանը, ինչպես նաև պայմանական պարտավորությունների ու ակտիվների բացահայտմանը վերաբերող մի շարք գնահատումներ և ենթադրություններ: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս կիրառվել է ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը: Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն, հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունները ներկայացված են այս Ծանոթագրության վերջում:

Արտարժույթով գործարքներ

Արտարժույթով իրականացված գործարքները փոխարկվում են համապատասխան ֆունկցիոնալ արժույթի գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի այդ օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Սկզբնական արժեքով ներկայացված, արտարժույթով արտահայտված ոչ դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Փոխարկման հետևանքով առաջացած արտարժույթային տարբերությունները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ է համարվում բանկային հաշիվները և դրամակարկղի դրամական միջոցները:

Ֆինանսական գործիքներ

Դասակարգում

Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքները, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, իրենցից ներկայացնում են ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ, որոնք`

- հիմնականում ձեռք են բերվել կամ առաջացել են մոտ ապագայում վաճառելու կամ հետ գնելու նպատակով,
- կազմում են միասին կառավարվող որոշված ֆինանսական գործիքների պորտֆելի մաս, որի համար առկա է վկայություն կարճ ժամկետում շահույթ ստանալու արդիական փաստացի ուղիների վերաբերյալ,
- հանդիսանում են ածանցյալ գործիք (բացառությամբ այն ածանցյալ գործիքների, որոնք նախատեսված են և հանդիսանում են արդյունավետ հեջավորման գործիքներ), կամ
- սկզբնական ճանաչման պահին Ընկերության կողմից նախատեսվում են որպես իրական արժեքով չափվող ֆինանսական գործիք, որի վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Ընկերությունը ֆինանսական ակտիվները և պարտավորությունները նախատեսում է որպես իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ստորև ներկայացված պայմաններից մեկի բավարարման դեպքում.

- ակտիվները կամ պարտավորությունները կառավարվում և գնահատվում են իրական արժեքի հիմունքով,
- նախատեսումը վերացնում է կամ էականորեն նվազեցնում է հաշվապահական անհամապատասխանությունները, որոնք կառաջանային այլ հանգամանքներում, կամ
- ակտիվը կամ պարտավորությունը ներառում է պարունակվող ածանցյալ գործիք, որը էականորեն ձևափոխում է դրամական միջոցների հոսքերը, որոնք այլապես կպահանջվեին պայմանագրի համաձայն:

Պոտենցիալ բարենպաստ պայմաններ ենթադրող (դրական իրական արժեք) առևտրական նպատակներով պահվող բոլոր ածանցյալ գործիքները, ինչպես նաև ձեռք բերված օպցիոնները, ներկայացվում են որպես ակտիվ: Պոտենցիալ ոչ բարենպաստ պայմաններ ենթադրող (բացասական իրական արժեք) առևտրական նպատակներով պահվող բոլոր ածանցյալ գործիքները, ինչպես նաև տրամադրված օպցիոնները, ներկայացվում են որպես պարտավորություն:

Սկզբնական ճանաչումից հետո իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքները, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, չեն վերադասակարգվում:

Տրամադրված վարկերը և դեբիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներն են, որոնք չունեն գնանշված շուկայական գին գործող շուկայում, բացառությամբ նրանց՝

- որոնց Ընկերությունը մտադիր է վաճառելու անմիջապես կամ կարճ ժամկետում,
- որոնց Ընկերությունը սկզբնական ճանաչման պահին նախատեսում է որպես իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում,
- որոնց Ընկերությունը սկզբնական ճանաչման պահին նախատեսում է որպես վաճառքի համար մատչելի, կամ
- որոնց գծով Ընկերությունը չի փոխհատուցի իր բոլոր սկզբնական ներդրումները՝ վճարումնակության անկարողությունից տարբեր այլ պատճառներով:

Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները ֆիքսված կամ որոշելի վճարումներով և ֆիքսված մարման ժամկետով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներն են, որոնք Ընկերությունը մտադրված է և հնարավորություն ունի պահել մինչև մարման ժամկետի լրանալը, բացառությամբ այն ներդրումների՝

- որոնց սկզբնական ճանաչման պահին Ընկերությունը նախատեսում է որպես իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում,
- որոնց Ընկերությունը նախատեսում է որպես վաճառքի համար մատչելի կամ
- որոնք համապատասխանում են տրամադրված վարկերի ու դեբիտորական պարտքերի սահմանմանը:

Վաճառքի համար մատչելի ակտիվներն իրենցից ներկայացնում են այնպիսի ֆինանսական ակտիվներ, որոնք նախատեսված են որպես վաճառքի համար մատչելի կամ դասակարգված չեն որպես տրամադրված վարկեր ու դեբիտորական պարտքեր, մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ կամ իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Ճանաչում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները ճանաչվում են հաշվապահական հաշվեկշռում, երբ Ընկերությունը դառնում է գործիքի պայմանագրային կողմ: Ֆինանսական ակտիվների «կարգավորվող ձևի» գնումները հաշվառվում են վերջնահաշվարկի ամսաթվի դրությամբ:

Չափում

Ֆինանսական ակտիվի կամ պարտավորության սկզբնական ճանաչումը տեղի է ունենում իրական արժեքով, իսկ իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների խմբում չդասակարգված ֆինանսական ակտիվների և պարտավորությունների դեպքում իրական արժեքին գումարվում են գործարքի հետ կապված ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ պարտավորության ձեռք բերմանը կամ թողարկմանը:

Սկզբնական ճանաչումից հետո ֆինանսական ակտիվները, ներառյալ ակտիվ համարվող ածանցյալ գործիքները, չափվում են իրական արժեքով, առանց նվազեցնելու գործարքի հետ կապված ծախսումները, որոնք կարող են առաջանալ վաճառքի կամ այլ օտարման հետ կապված, բացառությամբ՝

- տրամադրված վարկերի ու դեբիտորական պարտքերի, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը,
- մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը և
- սեփական կապիտալի գործիքներում ներդրումների, որոնք գործող շուկայում չունեն գնանշված շուկայական գին, որոնց իրական արժեքները հնարավոր չէ արժանահավատորեն չափել և որոնք չափվում են սկզբնական արժեքով:

Բոլոր ֆինանսական պարտավորությունները չափվում են ամորտիզացված արժեքով, բացառությամբ այն ֆինանսական պարտավորությունների, որոնք նախատեսված են որպես իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում և այն ֆինանսական պարտավորությունների, որոնք առաջանում են, երբ իրական արժեքով ներկայացված ֆինանսական ակտիվի փոխանցումը չի բավարարում սպաճանաչման պահանջները: Ամորտիզացված արժեքը հաշվարկվում է կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Հավելավճարները և զեղչերը, ներառյալ գործարքի հետ կապված սկզբնական ծախսումները, ներառված են համապատասխան գործիքի հաշվեկշռային արժեքում և ամորտիզացվում են՝ կիրառելով գործիքի արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Եթե առկա շուկայական տվյալների հիման վրա կատարած գնահատումը վկայում է սկզբնական ճանաչման պահին արժեքի համեմատ ակտիվի կամ պարտավորության իրական արժեքի աճի կամ նվազման մասին, ապա այդ աճից/նվազումից ստացված շահույթը կամ վնասը ճանաչվում են անմիջապես ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Եթե սկզբնական շահույթի կամ վնասի գումարը գնահատվում է հիմք ընդունելով ոչ միայն առկա շուկայական տվյալները, ապա այս շահույթը կամ վնասը համարվում են հետաձգված և ճանաչվում են ակտիվի կամ պարտավորության օգտակար ծառայության ժամկետի ընթացքում՝ համապատասխան հիմունքով, կամ ճանաչվում են շուկայական տվյալների առկա դառնալու, կամ ակտիվի կամ պարտավորության օտարման պահին:

Իրական արժեքի չափման սկզբունքներ

Ֆինանսական գործիքների իրական արժեքը հիմնված է հաշվետու ամսաթվի դրությամբ գնանշված շուկայական գնի վրա՝ առանց նվազեցնելու գործարքի հետ կապված ծախսումները: Եթե գնանշված շուկայական գինը առկա չէ, գործիքի իրական արժեքը որոշվում է գնորոշման մոդելների կամ զեղչված դրամական հոսքերի տեխնիկայի միջոցով:

Ջեղչված դրամական միջոցների հոսքերի տեխնիկայի օգտագործման դեպքում, դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերը հիմնվում են դեկավարության գնահատականի վրա, իսկ զեղչման դրույքը նմանատիպ պայմաններով գործիքի համար կիրառվող շուկայական համապատասխան տոկոսադրույքն է հաշվետու ամսաթվի դրությամբ: Գնորոշման մոդելների կիրառման դեպքում, մոդելում օգտագործվում են հաշվետու ամսաթվի դրությամբ շուկայական տվյալները:

Բորսաներում չրջանառվող ածանցյալ գործիքների իրական արժեքը գնահատվում է այն գումարի չափով, որը Ընկերությունը կստանա կամ կվճարի հաշվետու ամսաթվի դրությամբ պայմանագրի գործողությունը դադարեցնելու դեպքում՝ հաշվի առնելով շուկայի ներկա պայմանները և ներկա պահին պայմանագրային կողմերի վճարունակությունը:

Հետագա չափման հետևանքով առաջացած շահույթ և վնաս

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի փոփոխությունից առաջացած շահույթը կամ վնասը ճանաչվում է հետևյալ կերպ.

- ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչվում է այն ֆինանսական գործիքի գծով շահույթը կամ վնասը, որը դասակարգված է որպես իրական արժեքով չափվող, որի վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում,
- վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների գծով շահույթը կամ վնասը ճանաչվում է ուղղակիորեն սեփական կապիտալում՝ սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվության միջոցով (բացառությամբ արժեզրկումից կորուստների և փոխարժեքային տարբերությունների), մինչև որ նշված ակտիվն ապաճանաչվում է և այդ պահին կուտակված շահույթը կամ վնասը, որը նախկինում ճանաչվել էր սեփական կապիտալում, ճանաչվում է ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների գծով տոկոսները ստացվելու ժամանակ ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում և հաշվարկվում են կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գծով շահույթը կամ վնասը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, երբ ֆինանսական ակտիվը կամ պարտավորությունը ապաճանաչվում է կամ արժեզրկվում է, ինչպես նաև ամորտիզացիայի հաշվարկի միջոցով:

Ապաճանաչում

Ֆինանսական ակտիվը ապաճանաչվում է, երբ ֆինանսական ակտիվից դրամական միջոցների հոսքեր ստանալու իրավունքների գործողության ժամկետը լրացել է կամ երբ Ընկերությունը փոխանցել է ակտիվի սեփականության հետ կապված գրեթե բոլոր ռիսկերն ու օգուտները: Բոլոր իրավունքները կամ պարտավորությունները, որոնք առաջացել կամ պահպանվել են փոխանցման ժամանակ, ճանաչվում են առանձին որպես ակտիվներ կամ պարտավորություններ: Ֆինանսական պարտավորությունը ապաճանաչվում է, երբ մարվում է:

Ընկերությունը որոշ ակտիվներ ապաճանաչում է նաև այն դեպքում, երբ դուրս է գրում անհավաքագրելի ճանաչված ակտիվներին վերաբերող մնացորդները:

Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են՝ հաշվապահական հաշվեկշռում արտացոլվելով զուտ գումարով, եթե գոյություն ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք, ինչպես նաև՝ հաշվարկը զուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն:

Հիմնական միջոցներ

Մեխական ակտիվներ

Հիմնական միջոցները ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները, բացառությամբ շենքերի, որոնք արտացոլված են վերագնահատված արժեքով, ինչպես ներկայացված է ստորև:

Երբ հիմնական միջոցի միավորը բաղկացած է օգտակար ծառայության տարբեր ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, այդ բաղկացուցիչները հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ:

Վարձակալված ակտիվներ

Այն վարձակալությունը, որի դեպքում Ընկերությանն են փոխանցվում ակտիվի սեփականության հետ կապված գրեթե բոլոր ռիսկերն ու օգուտները, հանդիսանում է ֆինանսական վարձակալություն: Ֆինանսական վարձակալությամբ ձեռք բերված սարքավորումները ներկայացված են իրական արժեքից և վարձակալության սկզբում վարձակալության նվազագույն վճարների ներկա արժեքից նվազագույնով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:

Մաշվածություն

Մաշվածությունը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Օգտակար ծառայության գնահատված ժամկետները հետևյալն են.

Տնտեսական միջոցներ

1-5 տարի

Ոչ նյութական ակտիվներ

Ընկերության կողմից ձեռք բերված ոչ նյութական ակտիվները ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Համակարգչային ծրագրերի լիցենզիաների ձեռք բերման ծախսերը կապիտալացվում են որպես առանձին ծրագրի ձեռք բերման և ներդրման ծախսեր:

Ամորտիզացիան ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Օգտակար ծառայության գնահատված ժամկետները հետևյալն են.

Համակարգչային ծրագրեր

10 տարի

Արժեզրկում

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները հիմնականում ներառում են հաճախորդներին տրված վարկերը, այլ դեբիտորական պարտքերը և վաճառքի համար մատչելի չգնանշված պարտքային արժեթղթերը («վարկեր և դեբիտորական պարտքեր»): Ընկերությունը կանոնավոր կերպով վերանայում է վարկերը և դեբիտորական պարտքերը՝ արժեզրկման հայտանիշ բացահայտելու նպատակով: Վարկը կամ դեբիտորական պարտքը արժեզրկվում է, և արժեզրկումից կորուստներ ճանաչվում են այն և միայն այն դեպքում, երբ առկա է անկողմնակալ վկայություն սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ ավելի դեպքերի արդյունք հանդիսացող արժեզրկման մասին, և այդ դեպքը (կամ դեպքերը) ազդեցություն ունի վարկի գծով դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերի վրա, որոնց հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Ֆինանսական ակտիվների արժեզրկման անկողմնակալ վկայությունը կարող է ներառել պարտավորությունների չկատարումը կամ վճարումների հետաձգումը վարկառուի կողմից, վարկային պայմանագրի պայմանների խախտումները վարկառուի կողմից, վարկի կամ փոխառության պայմանների այնպիսի վերանայում, որը Ընկերությունը այլ հանգամանքներում չէր դիտարկի, վարկառուի կամ թողարկողի սնանկացման հայտանիշները, արժեթղթի ակտիվ շուկայի վերացումը, գրավի արժեքի նվազումը կամ ակտիվների խմբին վերաբերող այլ առկա տվյալները, ինչպիսիք են խմբի կազմի մեջ մտնող վարկառուների վճարունակության վատթարացումը, կամ տվյալ խմբի կազմի մեջ մտնող վարկառուների կողմից պարտականությունների չկատարման հետ փոխկապակցված տնտեսական պայմանների փոփոխությունը:

Նախևառաջ Ընկերությունը գնահատում է, արդյոք գոյություն ունի արժեզրկման անկողմնակալ վկայություն առանձին-առանձին՝ այն վարկերի ու դեբիտորական պարտքերի համար, որոնք առանձին վերցված զգալի են, և առանձին-առանձին կամ խմբային՝ այն վարկերի ու դեբիտորական պարտքերի համար, որոնք առանձին վերցված զգալի չեն: Եթե Ընկերությունը որոշում է, որ արժեզրկման անկողմնակալ վկայություն առկա չէ առանձին գնահատված վարկի կամ դեբիտորական պարտքի համար՝ լինի այն զգալի թե ոչ, ապա այն այդ վարկը ներառում է պարտքային ռիսկի համանման բնութագիր ունեցող վարկերի և դեբիտորական պարտքերի խմբում և կատարում է խմբային գնահատում՝ արժեզրկման հայտանիշ բացահայտելու նպատակով: Վարկերը և դեբիտորական պարտքերը, որոնց գծով առանձին իրականացվել է արժեզրկման ուսումնասիրություն և որոնց գծով ճանաչվել են կամ շարունակվում են ճանաչվել արժեզրկման կորուստներ, ներառված չեն արժեզրկման ընդհանուր գնահատման մեջ:

Եթե առկա է վարկի կամ դեբիտորական պարտքի գծով արժեզրկումից կորստի անկողմնակալ վկայություն, ապա կորստի գումարը չափվում է որպես վարկի կամ դեբիտորական պարտքի հաշվեկշռային արժեքի և այդ վարկի կամ դեբիտորական պարտքի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի, ներառյալ երաշխիքների գծով ստացվելիք գումարների և գրավի ներկա արժեքի միջև տարբերությունը: Պայմանագրով նախատեսված դրամական միջոցների հոսքերը և անցյալի փորձի վրա հիմնված վնասները, որոնց գծով ճշգրտումներ են կատարվել ներկա տնտեսական պայմաններն արտացոլող առկա տեղեկատվության հիման վրա, հանդիսանում են դրամական միջոցների ակնկալվող հոսքերի գնահատման հիմք:

Որոշ դեպքերում վարկի կամ դեբիտորական պարտքի գծով արժեզրկման կորստի գումարը գնահատելու համար պահանջվող տեղեկատվությունը կարող է սահմանափակ լինել կամ այլևս ամբողջությամբ չհամապատասխանել ներկա հանգամանքներին: Սա կարող է լինել այն դեպքում, երբ վարկառուն ֆինանսական դժվարություններ ունի և Ընկերության տրամադրության տակ կան քիչ տվյալներ համանման վարկառուների մասին: Այս դեպքերում արժեզրկումից կորստի գումարը Ընկերությունը գնահատում է՝ ելնելով իր փորձից ու դատողություններից:

Վարկերի և դեբիտորական պարտքերի գծով արժեզրկումից կորուստները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում և հակադարձվում է այնքանով, որքանով փոխհատուցվող գումարի հետագա աճը կարելի է անկողմնակալորեն կապել արժեզրկումից կորուստի ճանաչումից հետո տեղի ունեցած իրադարձությանը:

Այն դեպքերում, երբ վարկի հավաքագրումն հնարավոր չէ, վարկը դուրս է գրվում ի հաշիվ արժեզրկման գծով համապատասխան պահուստի: Ընկերությունը վարկի մնացորդը (և արժեզրկման գծով ցանկացած պահուստները) դուրս է գրում, երբ ղեկավարությունը որոշում է, որ վարկը ենթակա չէ հավաքագրման և ձեռնարկվել են վարկի վերադարձի հետ կապված բոլոր անհրաժեշտ քայլերը:

Սկզբնական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ

Սկզբնական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները ներառում են վաճառքի համար մատչելի ակտիվներում ընդգրկված սեփական կապիտալի չգնանշված գործիքները, որոնք չեն հաշվառվում իրական արժեքով, քանի որ այն հնարավոր չէ արժանահավատորեն գնահատել: Եթե առկա է այդ ներդրումների գծով արժեզրկումից կորստի անկողմնակալ վկայություն, ապա կորստի գումարն իրենից ներկայացնում է ներդրման հաշվեկշռային արժեքի և համանման ֆինանսական ակտիվների ներկա շուկայական հատույցադրույթով զեղչված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի ներկա արժեքի միջև տարբերությունը:

Այս ներդրումների գծով արժեզրկումից կորուստները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում և ենթակա չեն հակադարձման:

Ոչ ֆինանսական ակտիվներ

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ այլ ոչ ֆինանսական ակտիվները, բացառությամբ հետաձգված հարկերի, գնահատվում են արժեզրկման հայտանիշ բացահայտելու նպատակով: Ոչ ֆինանսական ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է որպես նրանց իրական արժեք՝ հանած վաճառքի ծախսերից և օգտագործման արժեքից առավելագույնը: Օգտագործման արժեքը գնահատելիս՝ դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերը զեղչվում են իրենց ներկա արժեքով՝ օգտագործելով մինչև հարկումը զեղչման այն դրույթը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի շուկայի ներկա գնահատականը և ակտիվին բնորոշ ռիսկերը: Այլ ակտիվներից առաջացող դրամական միջոցների ներհոսքից մեծապես անկախ և դրամական միջոցների ներհոսք չառաջացնող ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է այն դրամաստեղծ միավորի համար, որին պատկանում է տվյալ ակտիվը: Արժեզրկումից կորուստը ճանաչվում է, երբ ակտիվի կամ նրա դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է նրա փոխհատուցվող գումարը:

Ֆինանսական ակտիվների գծով արժեզրկումից կորուստը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում և հակադարձվում է միայն այն դեպքում, եթե փոխվել են փոխհատուցվող գումարը որոշելու համար օգտագործվող գնահատումները: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է միայն այն չափով, որ ակտիվի հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ, առանց համապատասխան մաշվածության և ամորտիզացիայի, եթե արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ:

Պահուստներ

Պահուստը հաշվապահական հաշվեկշռում ճանաչվում է, երբ Ընկերությունն ունի իրավական կամ կառուցողական պարտականություն, որպես անցյալ դեպքերի արդյունք, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Եթե ազդեցությունը էական է, պահուստները որոշվում են, զեղչելով ակնկալվող դրամական հոսքերը, օգտագործելով զեղչման մինչև հարկումը գործող այն դրույքը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի շուկայի ներկա գնահատականը և, անհրաժեշտության դեպքում, պարտավորությանը բնորոշ ռիսկերը:

Բաժնետիրական կապիտալ

Շահաբաժիններ

Շահաբաժիններ հայտարարելու և վճարելու Ընկերության կարողությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կանոնակարգերով:

Սովորական բաժնետոմսերի շահաբաժիններն արտացոլվում են որպես չբաշխված շահույթի բաշխում այն ժամանակահատվածում, երբ հայտարարվում են:

Հարկում

Շահույթի կամ վնասի գծով տարվա շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ այն մասի, որը վերաբերում է ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված տարրերին, որի դեպքում շահութահարկը ճանաչվում է սեփական կապիտալում:

Ընթացիկ հարկը տարվա շահութահարկի գծով ակնկալվող վճարման ենթակա հարկի գումարն է, որը հաշվարկվում է կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ և նախորդ տարիների վճարման ենթակա հարկերի գծով կատարված ճշգրտումները:

Հետաձգված հարկերը հաշվարկվում են օգտագործելով հաշվեկշռային պարտավորության մեթոդը՝ հիմնվելով ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակներով օգտագործվող ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակով օգտագործվող գումարների ժամանակավոր տարբերությունների վրա: Ժամանակավոր տարբերություններ չեն սահմանվում հարկման նպատակով չնվազեցվող գույքի, ակտիվների կամ պարտավորությունների սկզբնական ճանաչման համար, որը չի ազդում հաշվապահական հաշվառման կամ հարկվող շահույթի վրա, ինչպես նաև այն ժամանակավոր տարբերությունների համար, որոնք վերաբերում են դուստր ընկերություններում և ասոցիացված կազմակերպություններում կատարած ներդրումներին, որտեղ մայր ընկերությունն ի վիճակի է վերահսկել ժամանակավոր տարբերության հակադարձման ժամկետները և հավանական է, որ ժամանակավոր տարբերությունը չի հակադարձվի մոտ ապագայում: Հետաձգված հարկերի գումարը հիմնված է ակտիվների և

պարտավորությունների հաշվեկշռային արժեքի իրացման կամ մարման ակնկալվող մեթոդի վրա՝ կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ:

Հետաձգված հարկային ակտիվը ճանաչվում է միայն այն չափով, որքանով հավանական է, որ առկա կլինի հարկվող շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել ժամանակավոր տարբերությունները, չօգտագործված հարկային վնասները և արտոնությունները: Հետաձգված հարկային ակտիվները նվազեցվում են այնքանով, որքանով հավանական չէ, որ համապատասխան հարկային օգուտը կիրացվի:

Եկամտի և ծախսի ճանաչում

Բացառությամբ առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվների և իրական արժեքով չափվող այլ ֆինանսական գործիքների, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, տոկոսային եկամուտը և ծախսը ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվներին և իրական արժեքով չափվող այլ ֆինանսական գործիքներին, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, վերաբերող տոկոսային եկամուտը իրենից ներկայացնում է միայն կտրոնների գծով տոկոսները:

Ֆինանսական գործիքների գծով, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, հաշվեգրված գեղչերը և հավելավճարները ճանաչվում են շահույթի կազմում՝ հանած ֆինանսական գործիքների գծով, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, կրած վնասները:

Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտը և ծախսը ճանաչվում են համապատասխան ծառայությունը տրամադրելիս:

Շահաբաժինների տեսքով եկամուտը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ շահաբաժնի հայտարարման օրը:

Փոփոխություններ հաշվապահական հաշվառման քաղաքականությունում

2007թ. հունվարի 1-ի դրությամբ Ընկերությունն ընդունեց Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտ ՖՀՄՄ 7 «Ֆինանսական գործիքներ. Բացահայտումներ» և Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտ ՀՀՄՄ 1 «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում. Կապիտալին վերաբերող բացահայտումներ» ստանդարտի փոփոխությունը: Ստանդարտի և փոփոխության կիրառումը հանգեցրեց Ընկերության ֆինանսական գործիքների և այս գործիքների գծով առաջացող ռիսկերի բնույթի և չափի, ինչպես նաև Ընկերության խնդիրների, քաղաքականության և կապիտալի կառավարման գործընթացների առավել ընդլայնված բացահայտմանը:

Դեռևս չընդունված նոր ստանդարտներ և մեկնաբանություններ

Մի շարք նոր ստանդարտներ, ստանդարտների փոփոխություններ և մեկնաբանություններ չէին գործում 2007թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և չեն կիրառվել այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս: Այդ ստանդարտներից և փոփոխություններից ստորև ներկայացվածը հնարավոր է, որ ազդեցություն կունենա Ընկերության գործունեության վրա: Ընկերությունը մտադիր է ընդունել այդ ստանդարտները և դրանց փոփոխությունները, երբ վերջիններս մտնեն ուժի մեջ: Ընկերությունը դեռևս չի վերլուծել այս նոր ստանդարտի հնարավոր ազդեցությունը իր ֆինանսական հաշվետվությունների վրա:

Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտ ՀՀՄՍ 1 «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում» (վերանայված), որը գործում է 2009թ. հունվարի 1-ին կամ հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար, սահմանում է, թե ինչպես կազմակերպությունը պետք է իր ֆինանսական հաշվետվություններում ներկայացնի սեփական կապիտալի այն փոփոխությունները, որոնք չեն առաջացել սեփականատերերի հետ գործարքների արդյունքում և սեփական կապիտալի այլ փոփոխությունները, ինչպես նաև սահմանում է ֆինանսական հաշվետվություններում տեղեկատվության ներկայացմանը վերաբերող մի շարք այլ պահանջներ:

4 Եկամուտ հավատարմագրային կառավարումից և այլ ծառայություններից

	2007թ. հազ. դրամ	2006թ. հազ. դրամ
Եկամուտ հավատարմագրային կառավարումից	11,431	7,061
Եկամուտ արժեթղթերի տեղաբաշխումից	6,250	649
Եկամուտ խորհրդատվական ծառայություններից	2,033	750
Եկամուտ այլ ծառայություններից	254	-
	19,968	8,460

5 Այլ գործառնական եկամուտ

	2007թ. հազ. դրամ	2006թ. հազ. դրամ
Տոկոսային եկամուտ պետական գանձապետական պարտատոմսերից	2,040	144
Ջուտ շահույթ պետական գանձապետական պարտատոմսերի վաճառքից	631	457
	2,671	601

6 Վնաս փոխարժեքային տարբերություններից

	2007թ. հազ. դրամ	2006թ. հազ. դրամ
Վնաս ֆինանսական ակտիվների և պարտավորությունների վերագնահատումից	694	119
Վնաս բաժնետոմսերի թողարկման հետ կապված փոխարժեքային տարբերություններից	226	-
	920	119

7 Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախս

	2007թ. հազ. դրամ	2006թ. հազ. դրամ
Բանկային ծառայությունների վճարներ	397	468

8 Ընդհանուր վարչական ծախսեր

	2007թ. հազ. դրամ	2006թ. հազ. դրամ
Աշխատավարձ և հարակից ծախսեր	53,795	44,675
Աշխատավարձին վերաբերող հարկեր	4,356	2,891
Գովազդ և շուկայավարում	4,288	7,735
Մասնագիտական ծառայություններ	4,141	4,564
Վարձակալություն	4,133	2,590
Չփոխհատուցվող հարկեր, տույժեր և տուգանք	2,004	3,010
Կապի և հաղորդակցման ծառայություններ	1,900	689
Մաշվածություն և ամորտիզացի	1,745	1,273
Ապահովագրություն	1,641	854
Գրասենյակային ծախսեր	713	610
Տեղեկատվական ծառայություններ	671	495
Տրանսպորտ	488	388
Պետական տուրքեր	292	399
Այլ վճարներ աշխատակիցներին	253	533
Վերապատրաստման դասընթացներ	205	1,630
Թարգմանություններ	126	183
Գործուղումներ	-	1,055
Այլ	1,430	1,979
	82,181	75,553

9 Այլ գործառնական ծախսեր

	2007թ. հազ. դրամ	2006թ. հազ. դրամ
Անդամակցության վճարներ	264	264
Այլ գործառնական ծախսեր	94	14
	358	278

10 Շահութահարկի գծով ծախս

	2007թ. հազ. դրամ	2006թ. հազ. դրամ
Ընթացիկ հարկի գծով ծախս		
Ընթացիկ տարի	-	-
Հետաձգված հարկի գծով ծախս		
Ժամանակավոր տարբերությունների առաջացում և հակադարձում	11,669	13,076
Փոփոխություններ չճանաչված հետաձգված հարկային ակտիվներում	(11,669)	(21,400)
	-	(8,324)
Ընդամենը ծախս շահութահարկի գծով	-	(8,324)

Ընթացիկ և հետաձգված հարկերի գծով Ընկերության հանդեպ կիրառելի հարկային դրույքը կազմում է 20% (2006թ-ին՝ 20%):

Արդյունավետ հարկային դրույքի համադրում

	2007թ. հազ. դրամ	%	2006թ. հազ. դրամ	%
Շահույթ մինչև հարկումը	61,217		67,357	
Շահութահարկի հաշվարկ կիրառելի հարկային դրույքով	12,243	20.0	13,471	20.0
Չնվազեցվող ծախսեր/(չհարկվող եկամուտ)	(574)	(1.0)	(395)	(0.6)
Փոփոխություններ չճանաչված հետաձգված հարկային ակտիվներում	(11,669)	19.0	(21,400)	(31.8)
	-	-	(8,324)	(12.4)

11 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

	2007թ. հազ. դրամ	2006թ. հազ. դրամ
Ընթացիկ հաշիվ «Կասկադ Բանկ» ՓԲԸ-ում	6,088	35,889
Կանխիկը դրամարկղում	164	36
Ընթացիկ հաշիվ «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ում	65	124
	6,317	36,049

12 Վաճառքի համար մատչելի ակտիվներ

	2007թ. հազ. դրամ	2006թ. հազ. դրամ
Պարտքային և ֆիքսված եկամտառով այլ գործիքներ – չգնանշված		
ՀՀ կառավարության արժեթղթեր	13,114	-
Կորպորատիվ պարտատոմսեր – գնանշված		
«ՀայՌ-ուսգազարդ»	47,571	-
«Կասկադ կրեդիտ»	-	5,932
	60,685	5,932

13 Հիմնական միջոցներ

հազ. դրամ	Տնտեսական միջոցներ	Ոչ նյութական ակտիվներ	Ընդամենը
Սկզբնական արժեք			
Առ 1 հունվարի 2007թ.	4,742	-	4,742
Ավելացումներ	2,853	362	3,215
Օտարումներ	(83)	-	(83)
Առ 31 դեկտեմբերի 2007թ.	7,512	362	7,874
Մաշվածություն			
Առ 1 հունվարի 2007թ.	1,286	-	1,286
Մաշվածության ծախս	1,734	11	1,745
Օտարումներ	(83)	-	(83)
Առ 31 դեկտեմբերի 2007թ.	2,937	11	2,948
Հաշվեկշռային արժեք			
Առ 31 դեկտեմբերի 2007թ.	4,575	351	4,926
Առ 31 դեկտեմբերի 2006թ.	3,456	-	3,456
հազ. դրամ			
	Տնտեսական միջոցներ	Ընդամենը	
Սկզբնական արժեք			
Առ 1 հունվարի 2006թ.	79	79	
Ավելացումներ	4,663	4,663	
Առ 31 դեկտեմբերի 2006թ.	4,742	4,742	
Մաշվածություն			
Առ 1 հունվարի 2006թ.	13	13	
Մաշվածության ծախս	1,273	1,273	
Առ 31 դեկտեմբերի 2006թ.	1,286	1,286	
Հաշվեկշռային արժեք			
Առ 31 դեկտեմբերի 2006թ.	3,456	3,456	
Առ 31 դեկտեմբերի 2005թ.	66	66	

14 Առևտրական դեբիտորական պարտքեր

	2007թ. հազ. դրամ	2006թ. հազ. դրամ
Առևտրական դեբիտորական պարտքեր	2,893	2,450

15 Այլ դեբիտորական պարտքեր

	2007թ. հազ. դրամ	2006թ. հազ. դրամ
Դեբիտորական պարտքեր պետական բյուջեից	354	226
Կանխավճարներ	99	39
Այլ դեբիտորական պարտքեր	382	699
	835	964

16 Այլ կրեդիտորական պարտքեր

	2007թ. հազ. դրամ	2006թ. հազ. դրամ
Կրեդիտորական պարտքեր	4,566	7,186
Հաշվեգրված արձակուրդային վճարներ	2,224	1,559
Սոցիալական ապահովության վճարներ	-	430
Այլ	-	300
	6,790	9,475

17 Հետաձգված հարկային ակտիվ

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակով օգտագործվող ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակով օգտագործվող գումարների ժամանակավոր տարբերություններն առաջացնում են զուտ հետաձգված հարկային ակտիվներ 2007թ. և 2006թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Այս հետաձգված հարկային ակտիվները չեն ճանաչվել սույն ֆինանսական հաշվետվություններում: Ապագա հարկային օգուտները կիրացվեն միայն այն դեպքում, երբ առկա լինի շահույթ, որի դիմաց հնարավոր կլինի օգտագործել չօգտագործված հարկային վնասները, և եթե օրենքներում ու կանոնակարգերում չեն կատարվի այնպիսի փոփոխություններ, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ ապագա ժամանակաշրջաններում նվազեցումներ պահանջելու Ընկերության կարողության վրա: Ապագա հարկային օգուտները չեն ճանաչվել իրացման հետ կապված անորոշությունների պատճառով:

հազ. դրամ	Ակտիվներ		Պարտավորություններ		Զուտ	
	2007թ.	2006թ.	2007թ.	2006թ.	2007թ.	2006թ.
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	1,262	1,405	-	-	1,262	1,405
Նախորդ ժամանակաշրջանի հարկային վնաս	31,807	19,995	-	-	31,807	19,995
Ընդամենը հետաձգված հարկային ակտիվներ	33,069	21,400	-	-	33,069	21,400
Չճանաչված հետաձգված հարկային ակտիվներ	(33,069)	(21,400)	-	-	(33,069)	(21,400)
Ճանաչված զուտ հետաձգված հարկային ակտիվներ	-	-	-	-	-	-

18 Բաժնետիրական կապիտալ

Թողարկված կապիտալ

Հայտարարված բաժնետիրական կապիտալը բաղկացած էր 930,172 սովորական բաժնետոմսից (2006թ-ին՝ 1,000,100): Թողարկված և ամբողջությամբ վճարված բաժնետիրական կապիտալը բաղկացած է 495,158 սովորական բաժնետոմսից (2006թ-ին՝ 149,881): Բոլոր բաժնետոմսերի անվանական արժեքը կազմում է 262.7 դրամ (2006թ-ին՝ 1,000): 2007թ. ընթացքում թողարկվել է 345,227 (2006թ-ին՝ 102,436) սովորական բաժնետոմս անվանական արժեքով:

Տարվա ընթացքում Ընկերությունը նվազեցրեց բաժնետոմսերի անվանական արժեքը: Արդյունքում բաժնետիրական կապիտալը նվազեց 110,505 հազար դրամով:

Սովորական բաժնետոմսերի սեփականատերերն իրավունք ունեն ժամանակ առ ժամանակ ստանալ հայտարարված շահաբաժինները և քվեարկել Ընկերության բաժնետերերի տարեկան և ընդհանուր ժողովներում՝ մեկ բաժնետոմս - մեկ ձայն սկզբունքով:

Շահաբաժիններ

Վճարման ենթակա շահաբաժինները սահմանափակվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված Ընկերության առավելագույն չբաշխված շահույթի չափով: ՀՀ օրենսդրության համաձայն հաշվետու ամսաթվի դրությամբ բաժնետերերի կողմից շահաբաժիններ չէին հայտարարվել:

19 Ռիսկերի կառավարում

Ռիսկերի կառավարումն էական գործոն է ներդրումային ոլորտի համար և Ընկերության գործառնությունների կարևոր տարր է: Ընկերության հիմնական ռիսկերը կապված են շուկայական ռիսկի հետ, որը ներառում է տոկոսադրույքի և արժույթային ռիսկերը, ինչպես նաև իրացվելիության ռիսկը:

Ընկերությունն առանձնացնում է հաճախորդների պորտֆելներին և իր սեփական գործառնություններին վերաբերող ռիսկերը:

Հաճախորդների ակտիվները պահվում են առանձին: Սա բնորոշ է հավատարմագրային (ակտիվների կառավարում), ինչպես նաև բրոքերային ծառայություններին: Հաճախորդների ակտիվները չեն ճանաչվում Ընկերության հաշվապահական հաշվեկշռում և արդյունքում հաճախորդներն ենթարկվում են Ընկերության ֆինանսական վիճակի կայունություն հետ կապված սահմանափակ ռիսկերի: Ի լրումն, Ընկերությունն օգտագործում է իր սեփական հաշիվները ժամանակավորապես պահվող սովորական ֆիքսված եկամուտով ակտիվների համակցության համար, որոնք հետագայում օգտագործվում են հաճախորդների պահպանողական պորտֆելների համար: .

Ռիսկերի կառավարման քաղաքականություն և ընթացակարգեր

Ընկերության ռիսկերի կառավարման քաղաքականության նպատակն է բացահայտել, վերլուծել և կառավարել այն ռիսկերը, որոնց ենթարկված է Ընկերությունը, սահմանել ռիսկերի համապատասխան սահմանաչափեր և վերահսկման մեխանիզմներ, ինչպես նաև շարունակաբար վերահսկել ռիսկերի մակարդակները և դրանց համապատասխանությունը որոշված սահմանաչափերին: Ռիսկերի կառավարման քաղաքականությունը և ընթացակարգերը կանոնավոր կերպով վերանայվում են՝ շուկայական պայմանների, առաջարկվող ապրանքների ու ծառայությունների և ընդունված լավագույն մոտեցման փոփոխություններն արտացոլելու նպատակով:

Ընկերության Տնօրենների խորհուրդը պատասխանատու է ռիսկերի նվազեցմանն ուղղված միջոցառումների և հիմնական ռիսկերի կառավարման վերահսկման, ռիսկերի կառավարման քաղաքականության և ընթացակարգերի ուսումնասիրության, ինչպես նաև ռիսկի մեծ գործոն ենթադրող գործարքների հաստատման համար:

Ընկերության Գործադիր տնօրենը պատասխանատու է ռիսկերի նվազեցմանն ուղղված միջոցառումների վերահսկման և իրականացման ու ռիսկերի համար սահմանված համապատասխան սահմանաչափերում Ընկերության գործունեությունն ապահովելու համար: Նա նաև պատասխանատվություն է կրում ռիսկերի ընդհանուր կառավարման և օրենսդրական պահանջների հետ համապատասխանության ապահովման համար, ինչպես նաև վերահսկում է ֆինանսական և ոչ ֆինանսական ռիսկերի բացահայտման, չափման, կառավարման ու ներկայացման համար ընդհանուր սկզբունքների և մեթոդների կիրառումը:

Ռիսկի թե՛ արտաքին և թե՛ ներքին գործոնները բացահայտվում և կառավարվում են Ընկերության կազմակերպչական կառուցվածքի շրջանակներում: Հատուկ ուշադրություն է դարձվում ռիսկերի քարտեզների մշակմանը, որոնք օգտագործվում են ռիսկի բոլոր գործոնների բացահայտման համար և ծառայում են որպես հիմք ռիսկի նվազեցման համար ձեռնարկվող ընթացիկ միջոցառումների բավարար լինելը որոշելու համար: Բացի վարկային և շուկայական ռիսկերի ստանդարտ վերլուծությունից, Ընկերությունը վերահսկում է ֆինանսական և ոչ ֆինանսական ռիսկերը:

Ընկերությունն ունի բրոքերային և հավատարմագրային գործառնությունների ձեռնարկներ, որոնք ներառում են այս գործառնություններին վերաբերող ռիսկերի կախարգելմանն ուղղված բավականին մեծ քանակով միջոցառումներ:

Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը կապված է շուկայական գների տատանման հետ, ինչը ներառում է արտարժույթի փոխարժեքի, տոկոսադրույքի, վարկային սպրեդերի և կապիտալի գործիքների գների տատանումները, որոնք կարող են ազդեցություն ունենալ Ընկերության եկամուտների կամ հաճախորդների պորտֆելների արժեքների վրա: Շուկայական ռիսկը ներառում է արժույթային և տոկոսադրույքի ռիսկերը: Շուկայական ռիսկն առաջանում է տոկոսադրույքի, արտարժույթի և կապիտալի ֆինանսական գործիքների բաց դիրքերի գծով, որոնք հակված են շուկայի ընդհանուր և առանձին փոփոխությունների ու շուկայական գների փոփոխությունների ազդեցությանը:

Շուկայական ռիսկի կառավարման նպատակը ռիսկի այնպիսի կառավարումն ու վերահսկումն են, որոնք թույլ կտան պահպանել այս ռիսկին ենթարկվածության աստիճանը ընդունելի սահմաններում՝ միաժամանակ ապահովելով ռիսկի դիմաց եկամտաբերության օպտիմալացումը:

Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկը Ընկերության եկամտի կամ հաճախորդների ֆինանսական գործիքների պորտֆելների արժեքի փոփոխության ռիսկն է տոկոսադրույքների փոփոխման արդյունքում:

Դրամական միջոցների հոսքերի զգայունության վերլուծություն

Շուկայական տոկոսադրույքի փոփոխության հանդեպ Ընկերության շահույթի և սեփական կապիտալի զգայունության վերլուծությունը, որն իրականացվել է 2007թ. և 2006թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա տոկոսակիր ակտիվների և պարտավորությունների դիրքերի ու 100 բազիսային միավորով (բմ) շահութաբերության կորերի զուգահեռ նվազման կամ աճի պարզեցված սցենարի հիման վրա, հետևյալն է.

	2007թ.		2006թ.	
	Շահույթ	Սեփական կապիտալ	Շահույթ	Սեփական կապիտալ
100 բմ զուգահեռ աճ	117	117	12	12
100 բմ զուգահեռ նվազում	(117)	(117)	(12)	(12)

Իրական արժեքի զգայունության վերլուծություն

Շուկայական տոկոսադրույքի փոփոխությունների արդյունքում վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի փոփոխության հանդեպ Ընկերության շահույթի և սեփական կապիտալի զգայունության վերլուծությունը, որն իրականացվել է 2007թ. և 2006թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա դիրքերի ու 100 բազիսային միավորով (բմ) շահութաբերության կորերի զուգահեռ նվազման կամ աճի պարզեցված սցենարի հիման վրա, հետևյալն է.

	2007թ.		2006թ.	
	Շահույթ	Սեփական կապիտալ	Շահույթ	Սեփական կապիտալ
100 բմ զուգահեռ աճ	-	(354)	-	(41)
100 բմ զուգահեռ նվազում	-	354	-	41

Վերը ներկայացվածն ենթադրում է, որ վաճառքի համար մատչելի ակտիվները կպահվեն Ընկերության կողմից մոտ տարի ժամկետով՝ սկսած հաշվետու ամսաթվից:

Արժուքային ռիսկ

Ընկերությունն ունի երկու արտարժույթներով արտահայտված ակտիվներ և պարտավորություններ: Արտարժույթի ռիսկն առաջանում է, երբ արտարժույթով արտահայտված փաստացի կամ կանխատեսված ակտիվները գերազանցում են կամ պակաս են նույն արտարժույթով արտահայտված պարտավորություններից: Ծանոթագրություն 28-ում ներկայացված է լրացուցիչ տեղեկատվություն տարեվերջի դրությամբ արժուքային ռիսկին Ընկերության ենթարկվածության մասին:

Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հանդեպ Ընկերության տարվա շահույթի և սեփական կապիտալի զգայունության վերլուծությունը, որն իրականացվել է 2007թ. և 2006թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա դիրքերի և դրամի ու ԱՄՆ դոլարի փոխարժեքի 5% փոփոխության պարզեցված սցենարի հիման վրա, հետևյալն է.

	2007թ.		2006թ.	
	Շահույթ	Սեփական կապիտալ	Շահույթ	Սեփական կապիտալ
ԱՄՆ դոլարի փոխարժեքի 5% աճ դրամի հանդեպ	-	-	56	56
ԱՄՆ դոլարի փոխարժեքի 5% նվազում դրամի հանդեպ	-	-	(56)	(56)

Վարկային ռիսկ

Վարկային ռիսկը ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, երբ փոխառուն կամ պայմանագրային կողմն ի վիճակի չի լինում կատարել իր պարտավորությունները Ընկերության հանդեպ: Ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքները Ընկերության վարկային ռիսկին առավելագույն ենթարկվածության լավագույն արտացոլումներն են:

Ստորև ներկայացված են վարկային ռիսկին ենթարկված Ընկերության ակտիվները:

	2007թ. հազ. դրամ	2006թ. հազ. դրամ
Գրանական միջոցներ և բանկային հաշիվների մնացորդներ	6,317	36,049
Վաճառքի համար մատչելի ակտիվներ	60,685	5,932
Առևտրական դեբիտորական պարտքեր	2,893	2,450
Այլ դեբիտորական պարտքեր	835	964
Ընդամենը	70,730	45,395

Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Ընկերությունը կհանդիպի դժվարությունների՝ պարտավորվածությունները մարելու համար միջոցներ հայթայթելիս: Իրացվելիության ռիսկն առաջանում է ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության անհամապատասխանության դեպքում: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության ու տոկոսադրույքների համապատասխանությունը և/կամ վերահսկվող անհամապատասխանությունը հանդիսանում է ֆինանսական հաստատությունների կառավարման էական գործոն: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության ոչ ամբողջական համապատասխանությունը սովորական է ֆինանսական հաստատությունների համար՝ պայմանավորված իրականացվող գործարքների տարաբնույթությամբ և վերջիններիս հետ կապված որոշակի անորոշությամբ: Դա

հնարավորություն է տալիս բարձրացել շահութաբերությունը, սակայն կարող է նաև մեծացնել վնաս կրելու ռիսկը:

Ընկերության կողմից իրացվելիության ռիսկի կառավարման նպատակն է ցանկացած պահի ապահովել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ դրամական միջոցների հոսքերի հետ կապված պարտավորությունները մարելու համար (տես՝ Ծանոթագրություն 27):

20 Կապիտալի կառավարում

Ընկերության կապիտալի չափի պահանջները սահմանվում և վերահսկվում են ՀՀ կենտրոնական բանկի կողմից:

Օրենսդրությամբ սահմանված նվազագույն կապիտալը և Ընկերության նվազագույն սեփական կապիտալը պետք է կազմեն 60 միլիոն դրամ: 2006թ. և 2007թ. Ընկերության կապիտալը համապատասխանում էր կապիտալի օրենսդրությամբ սահմանված պահանջին:

21 Պայմանական դեպքեր

Ապահովագրություն

2007թ. ընթացքում Ընկերությունը ապահովագրեց իր գույքը և ընդհանուր պարտավորությունը: Այնուամենայնիվ, Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, դեռ չեն կիրառվում Հայաստանում: Ընկերությունն ապահովագրված չէ գործունեության ընդհատման դեպքերից: Քանի դեռ Ընկերությունը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է զգալի անբարենպաստ ազդեցություն ունենալ Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

Ընկերությունը ապահովագրում է նաև իր տնօրեններին և պաշտոնյաներին ոչ ճշգրիտ գործողությունների գծով հայցերի (ներառյալ աշխատանքային վեճերը) հետ կապված, ինչպես նաև ապահովագրում է իրեն նշված հայցերի հետ կապված տնօրենների և պաշտոնյաների փոխհատուցումների գծով: Ապահովագրված պարտավորության առավելագույն սահմանաչափը կազմում է 360,000,000 դրամ մեկ պատահարի/հայցի համար և ընդհանուր վերցված:

Իրավական պարտավորություններ

Բնականոն գործունեության ընթացքում Ընկերությունը կարող է հանդես գալ որպես դատական գործի կողմ: Այնուամենայնիվ, հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերության ղեկավարությունը տեղյակ չէ որևէ փաստացի, անավարտ կամ սպառնացող հայցերի մասին:

Հարկային օրենսդրության հակասություններ և երկիմաստություններ

Հայաստանի հարկային համակարգը համեմատաբար նոր է և բնորոշվում է օրենսդրության, պաշտոնական պարզաբանումների և դատավճիռների հաճախակի փոփոխություններով, որոնք հաճախ հստակ չեն, հակասական են և պահանջում են մեկնաբանություններ տարբեր հարկային մարմինների կողմից: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրության հարկային մարմինների կողմից, որոնք իրավասու են կիրառել տույժեր, տուգանքներ և գանձել տուկոսագումարներ: Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցած վերջին իրադարձություններից կարելի է ենթադրել, որ հարկային մարմիններն ավելի հաստատուն դիրք են գրավում հարկային օրենսդրության իրենց մեկնաբանությունների գործադրման հետ կապված:

Այս հանգամանքները կարող են այլ երկրների համեմատությամբ էական հարկային ռիսկ առաջացնել Հայաստանում: Ընկերության ղեկավարությունը հավատացած է, որ համապատասխանորեն է գնահատել հարկային պարտավորությունները՝ Հայաստանի հարկային օրենսդրության իր մեկնաբանությունների, պաշտոնական հայտարարությունների և դատավճիռների հիման վրա: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և հետևանքները կարող են լինել էական այս ֆինանսական հաշվետվությունների համար, եթե իրավասու մարմիններին հաջողվի գործադրել իրենց մեկնաբանությունները:

22 Հավատարմագրային կառավարման և բրոքերային գործունեություն

Հավատարմագրային կառավարման ծառայություններ

Ընկերությունը հավատարմագրային կառավարման ծառայություններ է մատուցում անհատներին, հավատարմագրային հիմնադրամներին և այլ հաստատություններին, որոնց շրջանակներում տնօրինում և կառավարում է ակտիվները կամ ներդնում է ստացված միջոցները տարբեր ֆինանսական հաստատություններում՝ հաճախորդների հայեցողությամբ: Ընկերությունը ստանում է վճարների տեսքով եկամուտ այս ծառայությունների մատուցումից: Հավատարմագրային ակտիվները չեն հանդիսանում Ընկերության ակտիվներ և չեն ճանաչվում Ընկերության հաշվապահական հաշվեկշռում: Ընկերությունը չի ենթարկվում վարկային ռիսկի նման տեղաբաշխումների հետ կապված, քանի որ չի երաշխավորում այս ներդրումները:

2007թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հավատարմագրային կառավարման շրջանակներում Ընկերության կողմից պահվող ակտիվների ընդհանուր գումարը կազմում էր 900,737 հազար դրամ (2006թ-ին՝ 676,996 հազար դրամ):

Բրոքերային գործունեություն

Ընկերությունը բրոքերային ծառայություններ է մատուցում անհատներին և իրավաբանական անձանց: Ընկերությունը ստանում է վճարների տեսքով եկամուտ այս ծառայությունների մատուցումից: Բրոքերային գործառնություններում ներգրավված ակտիվները հանդիսանում են հաճախորդների ակտիվներ և այդ իսկ պատճառով չեն ճանաչվում Ընկերության հաշվապահական հաշվեկշռում: 2007թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ բրոքերային գործառնությունների շրջանակներում Ընկերության կողմից պահվող ակտիվների ընդհանուր գումարը կազմում էր 7,990 հազար դրամ (2006թ-ին՝ զրո):

23 Գործարքներ կապակցված կողմերի հետ

Վերահսկողություն

Ընկերության մայր կազմակերպությունն է «Ջերարդ Լ. Գաֆեաճեան Ընտանեկան Հիմնադրամը»:

Ընկերության վերջնական վերահսկողն է հանդիսանում Ջերարդ Լ. Գաֆեաճեանը:

Մայր ընկերությունը, վերջնական վերահսկող կողմը կամ որևէ այլ միջանկյալ վերահսկող կազմակերպություն չեն հրապարակում իրենց ֆինանսական հաշվետվությունները:

Գործարքներ Վարչության անդամների հետ

Ստորև ներկայացված է «Աշխատակիցների հատուցումներ» հոդվածում ներառված ընդհանուր վարձատրությունը (Ծանոթագրություն 8):

	2007թ. հազ. դրամ	2006թ. հազ. դրամ
Աշխատավարձեր և պարգևավճարներ	26,959	24,840
Հատկացումներ պետական կենսաթոշակային հիմնադրամին	1,701	1,559
Այլ հատուցումներ	684	682
	29,344	27,081

Ստորև ներկայացված են Տնօրենների խորհրդի և Վարչության անդամների հետ գործարքների մնացորդները և միջին արդյունավետ տոկոսադրույքները 2007թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	2007թ. հազ. դրամ	Միջին արդյունավետ տոկոսադրույք	2006թ. հազ. դրամ	Միջին արդյունավետ տոկոսադրույք
Հաշվապահական հաշվեկշիռ				
Ակտիվներ				
Առևտրական դեբիտորական պարտքեր	124	-	50	-
Այլ կրեդիտորական պարտքեր	1,348	-	1,139	-

Տնօրենների խորհրդի և Վարչության անդամների հետ գործարքների գծով ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում արտացոլված այլ գումարները հետևյալն են.

	2007թ. հազ. դրամ	2006թ. հազ. դրամ
Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն		
Եկամուտ հավատարմագրային կառավարումից	343	147

Գործարքներ այլ կապակցված կողմերի հետ

Այլ կապակցված կողմերը ներառում են Ընկերության բաժնետիրոջը պատկանող ընկերությունները: Ստորև ներկայացված են 2007թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այլ կապակցված կողմերի հետ գործարքների մնացորդները, համապատասխան միջին տոկոսադրույքները և 2007թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում այդ գործարքների գծով արտացոլված գումարները:

	Մայր ընկերության այլ դուստր ընկերություններ		Այլ կապակցված կողմեր		Ընդամենը
	Միջին		Միջին		
	հազ. դրամ	տոկոսադրույք	հազ. դրամ	տոկոսադրույք	
Հաշվապահական հաշվեկշիռ Ակտիվներ					
Բանկային հաշիվների մնացորդներ	6,088	-	-	-	6,088
Առևտրական դեբիտորական պարտքեր	1,002	-	-	-	1,002
Այլ դեբիտորական պարտքեր	381	-	-	-	381
Պարտավորություններ					
Առևտրական կրեդիտորական պարտքեր	138	-	-	-	138
Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն					
Եկամուտ հավատարմագրային կառավարումից	3,849	-	-	-	3,849
Ընդհանուր վարչական ծախսեր	10,614	-	2,736	-	13,350

Այլ կապակցված կողմերը ներառում են Ընկերության բաժնետիրոջը պատկանող ընկերությունները: Ստորև ներկայացված են 2006թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այլ կապակցված կողմերի հետ գործարքների մնացորդները, համապատասխան միջին տոկոսադրույքները և 2006թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում այդ գործարքների գծով արտացոլված գումարները:

	Մայր ընկերության այլ դուստր ընկերություններ		Այլ կապակցված կողմեր		Ընդամենը
	Միջին		Միջին		
	հազ. դրամ	տոկոսադրույք	հազ. դրամ	տոկոսադրույք	
Հաշվապահական հաշվեկշիռ Ակտիվներ					
Բանկային հաշիվների մնացորդներ	35,889	-	-	-	35,889
Առևտրական դեբիտորական պարտքեր	946	-	-	-	946
Այլ դեբիտորական պարտքեր	699	-	-	-	699
Պարտավորություններ					
Առևտրական կրեդիտորական պարտքեր	1,116	-	-	-	1,116
Այլ կրեդիտորական պարտքեր	-	-	435	-	435
Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն					
Եկամուտ հավատարմագրային կառավարումից	3,694	-	-	-	3,694
Ընդհանուր վարչական ծախսեր	10,657	-	3,515	-	14,172

24 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Տարեվերջի դրությամբ դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունում արտացոլված դրամական միջոցները և դրանց համարժեքները բաղկացած էին հետևյալ հոդվածներից.

	2007թ. հազ. դրամ	2006թ. հազ. դրամ
Ընթացիկ հաշիվ «Կասկադ Բանկ» ՓԲԸ-ում	6,088	35,889
Կանխիկ դրամարկղում	164	36
Ընթացիկ հաշիվ «ԷՅԷ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ում	65	124
	6,317	36,049

25 Ֆինանսական գործիքների իրական արժեք

Ընկերության ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գնահատված իրական արժեքները ներկայացված են ստորև՝ ՖՀՄՄ 7 «Ֆինանսական գործիքներ, Բացահայտումներ» ստանդարտի պահանջների համաձայն:

Վաճառքի համար մատչելի ակտիվների գնահատված իրական արժեքները հիմնված են հաշվետու ամսաթվի դրությամբ գնանշված շուկայական գների վրա՝ առանց գործարքի գծով ծախսումների նվազեցման:

Այլ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գնահատված իրական արժեքները հաշվարկվում են կիրառելով զեղչված դրամական միջոցների հոսքերի տեխնիկական դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերի հիման վրա՝ օգտագործելով հաշվետու ամսաթվի դրությամբ նմանատիպ պայմաններով գործիքի հանդեպ կիրառելի զեղչման դրույքը:

Բոլոր ֆինանսական գործիքների գնահատված իրական արժեքը մոտավորապես հավասար է դրանց հաշվեկշռային արժեքին:

26 Միջին արդյունավետ տոկոսադրույքներ

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են 2007թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության տոկոսակիր ակտիվները և պարտավորությունները ու վերջիններիս համապատասխան միջին արդյունավետ տոկոսադրույքներն այդ ամսաթվի դրությամբ: Այս տոկոսադրույքներն իրենցից ներկայացնում են մինչև այս ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետն ընկած ժամանակահատվածի միջին եկամտաբերությունը:

	2007թ.		2006թ.	
	Արժեք հազ. դրամ	Միջին արդյունավետ տոկոսադրույք	Արժեք հազ. դրամ	Միջին արդյունավետ տոկոսադրույք
Տոկոսակիր ակտիվներ				
Վաճառքի համար մատչելի ակտիվներ				
- ՀՀ դրամ	60,685	8.74%	5,932	7.25%

27 Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության վերլուծությունը ըստ հաշվեկշռի հոդվածների

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է ակտիվների և պարտավորությունների պայմանագրային ժամկետայնությունն առ 31 դեկտեմբերի 2007թ.:

հազ. դրամ	Մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3 ամսից 1 տարի	1-ից 5 տարի	Անժամկետ	Ընդամենը
Ակտիվներ						
Դրամական միջոցներ և բանկային հաշիվների մնացորդներ	6,317	-	-	-	-	6,317
Վաճառքի համար մատչելի ակտիվներ	-	5,943	32,020	22,722	-	60,685
Հիմնական միջոցներ	-	-	-	-	4,926	4,926
Առևտրական դեբիտորական պարտքեր	-	2,893	-	-	-	2,893
Այլ դեբիտորական պարտքեր	-	65	480	290	-	835
Ընդամենը ակտիվներ	6,317	8,901	32,500	23,012	4,926	75,656
Պարտավորություններ						
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	191	-	6,599	-	-	6,790
Ընդամենը պարտավորություններ	191	-	6,599	-	-	6,790
Զուտ դիրքը առ 31 դեկտեմբերի 2007թ.	6,126	8,901	25,901	23,012	4,926	68,866
Զուտ դիրքը առ 31 դեկտեմբերի 2006թ.	34,979	(3,599)	4,442	98	3,456	39,376

Քանի որ Ընկերության ֆինանսական գործիքների մեծ մասը ֆիքսված դրույքով պայմանագրեր են, պայմանագրային մարմանը մնացած ժամանակահատվածները ներկայացնում են նաև պայմանագրային տոկոսադրույքի վերանայման ամսաթվերը:

28 Ակտիվները և պարտավորությունները ըստ արժույթների

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է Ընկերության ակտիվների և պարտավորությունների կառուցվածքն ըստ արժույթների 2007թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

հազ. դրամ	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Ֆունտ ստերլինգ	Ընդամենը
Ակտիվներ				
Դրամական միջոցներ և բանկային հաշիվների մնացորդներ	6,312	3	2	6,317
Հիմնական միջոցներ	4,926	-	-	4,926
Վաճառքի համար մատչելի ակտիվներ	60,685	-	-	60,685
Առևտրական դեբիտորական պարտքեր	2,893	-	-	2,893
Այլ դեբիտորական պարտքեր	835	-	-	835
Ընդամենը ակտիվներ	75,651	3	2	75,656
Պարտավորություններ				
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	6,790	-	-	6,790
Ընդամենը պարտավորություններ	6,790	-	-	6,790
Զուտ դիրքը առ 31 դեկտեմբերի 2007թ.	68,861	3	2	68,866
Զուտ դիրքը առ 31 դեկտեմբերի 2006թ.	38,242	1,129	5	39,376

29 Հաշվետու ամսաթվից հետո տեղի ունեցած դեպքեր

2008թ-ին Ընկերությունը թողարկեց 380,647 սովորական բաժնետոմս՝ 100,000 հազար դրամ գումարով: